



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ
ՊԱՏԳԱՄԱՎՈՐ**

ՀՀ, Երևան 0095, Մ. Բաղրամյան պող. 19, հեռ.՝ 011513351, zaruhi.batoyan@parliament.am

01.07.2022

ՀՀ ԱԺ նախագահ

պարոն Ալեն Սիմոնյանին

Հարգելի՛ պարոն Սիմոնյան,

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 109-րդ հոդվածի և «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 65-րդ և 67-րդ հոդվածների պահանջները՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացնում եմ «Տեսալսողական մեդիայի» մասին օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին, «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքում լրացում կատարելու մասին, «Լեզվի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին նախագծերը:

Ազգային ժողովի Աշխատակարգի 25-րդ կետի համաձայն՝ գրությանը կցվում են.

- ա) նախագծերը (հիմնական գեկուցող՝ Զարուհի Բաթոյան),
- բ) նախագծի ընդունման հիմնավորումը,
- գ) գործող օրենքի փոփոխվող հոդվածների մասին տեղեկանքը:

Խնդրում եմ սահմանված կարգով օրինագիծը դնել շրջանառության մեջ:

Հարգանքով՝

Զարուհի Բաթոյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ՄԵԴԻԱՅԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ

ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1.

«Տեսալսողական մեդիայի մասին» 2020 թվականի հոկտեմբերի 16-ի N 20-395-Ն օրենքի (այսուհետև՝ Օրենք) 6-րդ հոդվածի

- 4-րդ մասը վերաճարարել հետևյալ շարադասությամբ՝. «4. Հևարձակեղները, որոնք արտադրում են նուև մանկական և լրատվական տեսալսողական հաղորդումներ, ֆիլմեր, պարտավոր են իրենց ծրագրերում սպահովել յսողության խնդիրներ տնեցող սպասողների համար տեղեկատվության մոտչելիությունը՝ օրվա ընթացքում՝ համարադասությանը արեվագն մեկական մանկական հաղորդում ներկայացնելով ժեստերի լեզվով բարգմանությամբ, լրատվական հաղորդում և ֆիլմ՝ ներկայացնելով ժեստերի լեզվով բարգմանությամբ և (կամ) երթուղով:»:
- 4-րդ մասը լրացնել նոր նախադասությամբ՝ հետևյալ շարադասությամբ՝. «Ժեստերի լեզվով բարգմանությամբ տեսալսողական տեղեկատվության ներկայացման նվազագույն տեխնիկական պահանջները և հետաքննման ժամերը:»:

Հոդված 2.

Օրենքի 9-րդ հոդվածի 7-րդ մասը վերաճարարել հետևյալ նախադասությամբ. «Արգելվում են տեսալսողական հաղորդումները, որոնց միջոցով տարածվում է ազգային, ռասայական, սեռային, կրոնական, տարիքային, հաճախողության, անձնական կամ սոցիալական բնույթի այլ հատկանիշներով խտրականություն կամ պարունակում են նման նպատակ հետապնդող տեղեկատվություն:»:

Հոդված 3.

Օրենքի 22-րդ հոդվածի

- Ձ. 6-րդ մասի 3-րդ կետի գ. ենթակետը շարադրել հետևյալ շարադասությամբ.¹ «գ. սպառողներին մատուցել հաղորդումներ, որոնք ուղղված են ազգային, բաժնային, կրոնական և սեռային, տարիքային, հաճախումության, անձնական կամ սոցիալական բնույթի այլ հատկանիշներով խտրականություն պարունակող կարծրատիպերի հաղթանաբմանը»:
- Ջ. 6-րդ մասը լրացնել նոր կետով հետևյալ բովանդակությամբ.² «4) ապահովել հարերեն ենթագրերով և (կամ) ժեստերի լեզվի փոխարկությամբ՝

ա. շարքովա ընթացքում առնվազն մեկական կրթական, տնտեսագիտական, մշակութային և ժամանցային բնույթի հաղորդման հեռարձակում,

բ. Հայաստանի Հանրապետության պետական տեղերին և հիւստակի օրերին կազմակերպվող պատմության միջոցառումների ուղիղ հեռարձակումները,

գ. Հայաստանի Հանրապետության վարչապետի, Հայաստանի Հանրապետության ԱԺ նախագահի, Հայաստանի Հանրապետության նախագահի, Ամենայն Հայոց Կաթողիկոսի ուղիղ Եթերով հեռարձակվող ելույթները, սուրճները և նախապես ծրագրված կարգադրույթները,

դ. արտակարգ դրության ժամանակ երբև հեռարձակվող հատուկ քողարկումները,

ե. սոցիալական գովազդը»:

Հոդված 4.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2023 թվականի հունվարի 1-ին:
2. Սույն օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի գ և դ կետերը ուժի մեջ են մտնում 2022 թվականի դեկտեմբերի 1-ին:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«Տեսչադատական մեղիայի» մասին օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու և կից օրենքների նախագծերի վերաբերյալ

1. Հնթացիկ իրավիճակը և իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը

Օրենքի նախագծի ընդունումը պայմանավորված է լսողության խնդիրներ ունեցող անձանց մատչելի տեղեկատվություն ստանալու իրավունքի իրացման իրավական հիմքերի ստեղծման անհրաժեշտությամբ, բխում է ՀՀ Սահմանադրությունից և միջազգային պայմանագրերով ստանձնած երկրի պարտավորություններից:

Հասարակական կյանքում ամօրի լիարժեք ներառման համար, ի թիվս այլնի, առաջնային համակարգում ունի սեփական իրավունքների և ազատությունների վերաբերյալ իրազեկման ապահովումը, որը նպաստում է ինֆուլույն օրենքների կայացմանն ու այդ իրավունքներից և ազատություններից անարգել օգտվելու հնարավորությանը: Որպես նավածի իրացման հնարավորություն՝ հիմնարար համակարգում ունի տեղեկատվության մատչելիության ապահովումը, ինչի քաջակալությունն ավագ օրենսդրական և իրավափրատ պրակտիկայում մի շարք խոչընդոտներ է ստեղծում հաճախամություն ունեցող անձանց, հատկապես լսողության խնդիր ունեցող անձանց համար:

2010 թվականին Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է ՄՅԿ-ի Հաճախամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիան, որի 21-րդ հոդվածով ամրագրվում է, որ մասնակից պետությունները ձեռնարկում են անհրաժեշտ միջոցներ՝ ապահովելու, որ հաճախամություն ունեցող անձինք կարողանան իրականացնել իրենց խոսքի ու կարծիքի ազատության իրավունքը, ինչպես նաև փնտրել, ստանալ և տարածել տեղեկություններ ու գաղափարներ մյուսների հետ հավասար հիմունքներով և հաղորդակցության իրենց նախընտրած բոլոր միջոցներով: Հենց որում, նաված իրավունքների իրականացումն անհրաժեշտ է ապահովել առանց խավելյալ ծախսերի հաճախամություն ունեցող անձանց համար:

Նավածի առնչությամբ կոնվենցիոն կարգավորումներից բացի ՀՀ ներայետական օրենսդրությունը ու օրենսկի կարգավորումներ է նախատեսում: Մասնավորապես՝ «Հաճախամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածը սահմանում է, որ պետությունը հայերեն ժեստերի լեզուն

ընդունում է սրպես հաղորդակցման, ուսուցման և քարզմանչափական ծառայությունների տրամադրման միջոց, ինչպես նաև տեսալսողական մեդիածառայություն մատուցողները պարտավոր են իրենց ծրագրվում ապահովել լսողության խնդիրներ ունեցող անձանց համար հնարավոր տեղեկությունների ստացման մատչելիությունը: Լսողության խնդիրներով համանդամության ունեցող անձանց տեղեկություն ստանալու մատչելիությունն ապահովելու համար «Տեսալսողական մեդիայի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով սահմանվում են օրվա ընթացքում հայերեն ժեստերի լեզվով քարզմանությամբ և (կամ) հայերեն բաց կամ փակ ենթագրերով (համաժամանակյա գրավոր նկարագրությամբ) տեսալսողական հաղորդումների նվազագույն բանախմբեր և պահանջները:

«Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է՝ «Հեռարձակողները, որոնք սրտադրում են նաև մանկական և (կամ) լրատվական տեսալսողական հաղորդումներ, պարտավոր են իրենց ծրագրերում ապահովել լսողական խնդիրներ ունեցող սպասողների համար տեղեկատվության ընկալման մատչելիությունը՝ օրվա ընթացքում՝ կապովորդող ախտական մարմնի սահմանած ժամկետ, համապատասխանաբար առնվազն մեկալիս մանկական և լրատվական տեսալսողական հաղորդում ներկայացնելով ժեստերի լեզվով քարզմանությամբ կամ հայերեն ենթագրով»:

Արդյունքում՝ ստեղծվել է մի լրավիճակ, երբ ժեստերի լեզվով հեռարձակվող լրատվական քաղաքկուսները երբեք են դուրս գալիս աշխատանքային ժամին, օրինակ՝ ժամը 17:00-ին, ինչը հնարավորություն չի բնձնում հաճախորդություն ունեցող անձանց իրենց համար նստիսնալի և մատչելի կերպով ստանալու տեղեկատվություն հեռուստաներից: Ինչ վերաբերում է մանկական հաղորդումներին, ապա օրենքը չի առանձնացնում զրան մուլտիֆիլմերից, արդյունքում հեռարձակողները մեկ միջիմեր ենթագրերով են եթեր հեռարձակում, ինչը չի ապահովում երեխաների տեղեկություն հաճախու, կրթական և զարգացման ծրագրերին հաղորդակից լինելու իրավունքը, քանի որ մերջիններին համար ոչ միայն դժվար է ընթերցել ենթագրերը, այլ նաև անհնարին, քանի որ մուլտիֆիլմեր գիտող երեխաների մեծ մասը նախադրուցական սուրբի է, հետևաբար կարողալ չգիտի:

Լսողության խնդիր ունեցող հեռուստացիոտուները գրված են պատշտական ուղիս երերներից և հարցազրույցներից տեղեկություն ստանալու հնարավորությունից, մասնավորապես ՀՀ վարչապետի, ՀՀ ԱԺ նախագահի, ՀՀ նախագահի ուղիղ երերով հեռարձակվող ելույթները, ուղերձները չեն ուղեկցվում ժեստերի լեզվի քարզմանությամբ՝ նույնիսկ Հանրային հեռուստաընկերության եթերում: Լսողության խնդիր ունեցող

անձանց իրավունքներն իրացման համար չկան պայմաններ Արտակարգ դրության ժամանակ տրագ և մատչելի տեղեկություն ստանալու համար:

Հեռուստաերթով հեռարձակվող սոցիալական գովազդը ժեստերի լեզվով կամ ենթագրերով հեռարձակվում է միայն պատվիրատուի նախաձեռնությամբ, ինչը կրկին սահմանափակում է սեպեկատվության մատչելիությունը:

Հստակության խնդիր ունեցող հեռուստադիտողները չունի կրթական, առողջապահական, մեակության, ժամանցային բնույթի հեռուստադրագրերին հաղորդակից լինելու, այդ թվում ֆիլմեր գիտելու նկարավորություն:

Խնդրահարույց է հաև ժեստերի լեզվով հեռարձակման կազմակերպումը, քանի որ թարգմանության ընթացքում չեն պահպանվում միջազգայնորեն ընդունված տեխնիկական չափանիշները և պահանջները:

Բացի վերը նշվածից, գործող կարգավորումներով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքն անդրադառնում է խտրականության արգելին, այնուամենայնիվ տեսալսողական հաղորդումների չարաժանցումն ալգելը չի սահմանում տարիքային, հասմանության, անձնական կամ սոցիալական բնույթի այլ հատկանիշներով խտրականության արգել:

2020 թվականի օգոստոսի 7-ին ուժը կորցրած է հռնաչվել «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքը, սրի 3-րդ հոդվածով սահմանվում էր «սուբորթարգմանություն՝ հեռուստատեսողորդման համաժամանակյա թարգմանությունը ձեռք-լեզվով»: Սակայն 2020 թվականի հուլիսի 16-ին ընդունված «Տեսալսողական մեդիայի մասին» ՀՀ օրենքը չի ներառում համարժեք սահմանում: Այսպիսով՝ ժեստերի լեզվի համազգայնությունը որևէ օրենքով սահմանված չէ:

2. Առաջարկվող կարգավորման բնույթը

Առաջարկվող իրավական տեղով նախատեսվում է փոփոխություններ և լրացումներ կատարել «Տեսալսողական մեդիայի մասին» ՀՀ օրենքում և կից օրենքների փաթեթում, մասնավորապես՝

- հասակեցնել հայերեն ժեստերի լեզվով և ենթագրերով հեռարձակվող հաղորդումների տեսակները և ավելացնել դրանց ծավալը,

- հատկեցնել կարգավորող պետական մարմնի յիսագործությունները ժեստերի լեզվով քարզմանությամբ տեսալսողական տեղեկատվության ներկայացման նվազագույն տեխնիկական պահանջներին և հեռարձակման ժամերի սահմանման վերաբերյալ
- սահմանել տեսալսողական հաղորդումների չափաչափման արգելի գծեր և տարիքային, հասնականություն, անձնական կամ սոցիալական բնույթի այլ հատկանիշներով խտրականություն տարածելու, կամ նման նպատակ հետապնդող տեղեկատվություն պարտահանելու դեպքում,
- հայերեն ենթագրերով և ժեստերի լեզվի թարգմանությամբ լրացուցիչ և պարտադիր հաղորդումների ցանկ սահմանել Հանրային հեռարձակողների համար, ներառելով կրթական, առողջապահական, մշակութային և ժամանցային բնույթի հաղորդումները, պատմական տեղեկատվությունը, արտակարգ դրության ժամանակ հատուկ բաղադրումները և սոցիալական գովազդը,
- «Լեզվի մասին» ՀՀ օրենքում և սահմանել «Ժեստերի լեզու» հասկացությունը:

3.Ակնկալվող արդյունքը

Օրենքի ընդունման արդյունքում կստեղծվեն յուրավեր կոմիտե՝ բնդլայնելու հայերեն ժեստերի լեզվով և (կամ) ենթագրերով հեռարձակվող տեսալսողական հաղորդումների ծավալը, լրացուցիչ պարտավորություններ կսահմանվեն Հանրային հեռարձակողների համար, օրենքով կսահմանվի «Ժեստերի լեզու» հասկացությունը:

ՏԵՂԵԿԱԼՔ

«Տեսալսողական մեդիայի մասին» ՀՀ օրենքի փոփոխվող հոդվածների վերաբերյալ

Հոդված 6. Տեսալսողական տեղեկատվության լեզուն

4. Հեռարձակողները, որոնք արտադրում են նաև մանկական, ~~և (կամ)~~ լրատվական տեսալսողական հաղորդումներ, ~~և փվլվերք~~ պարտավոր են իրենց ծրագրերում ապահովել լսողության ~~ախան~~ խնդիրներ ունեցող սպասողների համար տեղեկատվության ~~ընդհատ~~ մատչելիությունը՝ օրվա ընթացքում՝ ~~իրադատվող պեսակտն մարմնի-տեխնոնած ժամերին~~ համապատասխանաբար առնվազն մեկական մանկական ~~հաղորդում ներկայացնելով ժեստերի լեզվով քարզմունությունը~~ ~~և (կամ)~~ լրատվական տեսալսողական հաղորդում ~~և փվլվերք~~ ներկայացնելով ժեստերի լեզվով քարզմունությամբ ~~և (կամ)~~ հայերեն ենթագրով:

~~Ժեստերի լեզվով քարզմունությամբ տեսալսողական տեղեկատվության ներկայացման նվազագույն սովորական պահանջները և հեռարձակման ժամերը:~~

Հոդված 9. Տեսալսողական հաղորդումների չորսառեման արգելք

7. Արգելվում են տեսալսողական հաղորդումները, որոնք ~~մի և զուգակցությամբ և հետադարձում են~~ ազգային, առաջական, սեռային, ~~և~~ կրոնական, առարկային, համայնքային, անձնական կամ սոցիալական ~~ընտրելի~~ ~~ուր~~ հատկանիշներով խարականություն հղող/հղող հարաբերակում պարունակում են նման նպատակ հետապնդող տեղեկատվություն:

Հոդված 22. Հանրային հեռարձակողների կարգավիճակը և գործունեության սկզբունքները

6. Հանրային հեռարձակողները պարտավոր են՝

- 1) ապահովել հեռարձակվող տեղեկատվական, կրթական, մշակութային և ժամանցային բնույթի հաղորդումների քաղաքացիականությունը.
- 2) օրվա էթերաժամը հասկացնել հայերեն տեսալսողական հաղորդումներին, բացառությամբ սույն օրենքով նախատեսված դեպքերի.
- 3) մշակել և իրականացնել ծրագրային էադամականություն՝

ա. հասարակական առավել հնչեղություն ունեցող տեղեկատվության հեռարձակման համար օգտագործել ամենազիտելի երևալին ժամանակը՝ ներկայացնելով խնդրի կամ հարցի վերաբերյալ պատճառական հաղորդագրությունը (տեղեկատվությունը), կարծիքների բազմազանությունը,

բ. սպառողներին մատուցել հաղորդումներ, որոնցում ներկայացվում են Հայաստանի Հանրապետության տարբեր տարածաշրջաններին, ազգային փոքրամասնություններին, հասարակության տարբեր շերտերին ու օղջիակական խմբերին տակերը,

գ. սպառողներին մատուցել հաղորդումներ, որոնք ուղղված են ազգային, բուսայական, կրոնական և սեռային, տարիքային, հասնանրամության, անձնական կամ օղջիակական ընտրելի այլ հատկանիշներով խտրականություն պարունակող կարծրատիպերի հաղթահարմանը,

4) ապահովել հայերեն ենթադրելով և (կամ) ժեստերի լեզվով բազմաանությամբ՝

ա. շարքով ընթացում տունվազն մեկական կրթական, առողջապահական, մշակութային և ժամանցային ընտրելի հաղորդման հեռարձակում,

բ. Հայաստանի Հանրապետության պետական տոներին և հիշատակի օրերին կազմակերպվող պատճառական միջոցառումներին ուղիղ հեռարձակումները,

գ. Հայաստանի Հանրապետության վարչապետի, Հայաստանի Հանրապետության ԱԺ նախագահի, Հայաստանի Հանրապետության նախագահի, Ամենայն Հայոց Կաթողիկոսի ուղիղ երբեքով հեռարձակվող ելույթները, ուղերձները և նախապես ծրագրված հարցազրույցները,

դ. արտակարգ դրության ժամանակ երբեք հեռարձակվող հատուկ թուղարկումները,

ե.) օղջիակական գովազդը»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

Հոդված 1.

Ազգային ժողովի կանոնակարգ Հայաստանի Հանրապետության 2016 թվականի դեկտեմբերի 16-ի N 20-9-Ն սահմանադրական օրենքի 165-րդ հոդվածի 2-րդ մասը լրացնելի հետևյալ նախագատարամբ.¹
«Ազգային ժողովի նիստերի և խորհրդարանական լսումների անցանց հեռարձակումը Ազգային ժողովի պաշտոնական ինտերնետային կայքով կարող են ուղեկցվել հայերեն ժեստերի լեզվի քարզմանությամբ»:

ՏԵՂԵԿԱՆՔ

Ազգային ժողովի կանոնակարգ 22 սահմանադրական օրենքի փոփոխվող հոդվածի վերաբերյալ

Հոդված 165. Ազգային ժողովի աշխատանքների լուսաթանուկը

1. Ազգային ժողովը կարող է ունենալ իր ազատ ծրագրերը:

2. Ազգային ժողովի, նրա հանձնաժողովների հրապարակային նիստերը, ինչպես նաև խորհրդարանական լուսններն առցանց հեռարձակվում են Ազգային ժողովի պաշտոնական ինտերնետային կայքում:

Ազգային ժողովի նիստերի և խորհրդարանական լուսնների առցանց հեռարձակումը Ազգային ժողովի պաշտոնական ինտերնետային կայքում կարող են ուղեկցել հայերեն ժրտերի լեզվի թարգմանությամբ:

3. Կանոնակարգի 40-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ և 5-րդ կետերում նշված նիստերի տեսագրություններն Աշխատակարգով սահմանված կարգով՝ իաջորդ օրն ամբողջությամբ ցուցադրվում են հեռուստատեսությամբ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ
«ԼԵԶՎԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1.

«Լեզվի մասին» Հայաստանի Հանրապետության 1993 թվականի մարտի 30-ի ՀՕ-52 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 1.1.-րդ հոդվածը լրացնել նոր մասով՝ հետևյալ նախագաղափարն է. «ժեստերի լեզուն՝ լեզվական ինքնատիպ համակարգ, որը պրակտիկում է ձեռքերի իմաստավորված շարժումներով՝ պիմախաղի, օրբուհների շարժումների և մարմնի դիրքի համակցմամբ»:

Հոդված 2.

Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պատշաճության հրապարակման օրվան հաջորդող 10-րդ օրը:

ՏԵՂԵԿԱՆՔ

«Էլեգվի մասին» ՀՀ օրենքի փոփոխող երկրորդ փաթեթի վերաբերյալ

Հոդված 1.1. Օրենքում գործածվող հիմնական հասկացությունները

Օրենքում գործածվում են հետևյալ հիմնական հասկացությունները.

մեռուերի յեզո՝ բեզմիան ինքնատիպ համակարգ, որը գրանցվում է ձեռքերի խմսաթափարված շարժումներով՝ ղիմախաղի, շրթունքների շարժումների և մարմնի ղիլի համակցմամբ: